

20	Ձմեռուսեցի Պերակոս Մարտիրոսեան . . .	20
1	„ Պարագետ Տէր Պետրոսեան . . .	1
25	Հասարակութիւն Համակի զեղջ . . .	25
1	„ Նոյն զիւղացի Աւագ Քաջանայ Տէր Սիմէոնեան . . .	1
1	„ Յակոբ Քաջանայ Տէր Յովսէփեան . . .	1
1	„ Մկրտիչ Աւագ Քաջանայ Տէր Պարագետեան . . .	1
50	„ Եզեկիէլ Յովրեանց . . .	50
1	„ Յովսէփ Տէր Յովսէփեան . . .	1
50	„ Բարսեղ Տէր Յարութիւնեան . . .	50
5	Հասարակութիւն Սպիտակ զեղջ . . .	5
20	Նոյն զիւղացի Արդար Տէր Միքայէլեան . . .	20
20	„ Յովսէփ Վարդանեան . . .	20
10	„ Պօղոս Աւետեան . . .	10
10	„ Մեսրոպ Տէր Վարդանեան . . .	10
10	„ Բարսեղ Տէր Միքայէլեան . . .	10
10	„ Թորոս Մանուկեան . . .	10
20	„ Յարութիւն Մանուկեան . . .	20
20	„ Սիմէօն Մնացականեան . . .	20
20	„ Վազար Պօղոսեան . . .	20
20	„ Քօչար Մնացականեան . . .	20
20	„ Գէորգ Սարգսեան . . .	20
10	„ Սաչակ Մելոյեան . . .	10
10	„ Մեկքիսէթ Առաքելեան . . .	10
20	„ Գրիգոր Թաղոսեան . . .	20
10	„ Աւագ Պետրոսեան . . .	10
1	„ Յովհաննէս Քաջանայ Տէր Խաչատրեան . . .	1

(Սնանկութիւն է յետագայի):

ՃԵՄԱՐԱՆ Ս. Ի.ՋՄԻԱԾՆԻ.

Ներկայ տարւոյս յառաջակայ Սեպտեմբեր ամսոյ մէջ Մայր Աթոռոյ Ս. Եջմիածնի նորակառոյց ճեմարանի բացուիլը կարգադրուած լինելով՝ վախճանայրապետ յատկապէս երեք վարդապետներ — Արժ. Արիստակէս Սեղրակեան, Գէորգ Սուրենեանց և վաչան

Բաստամեանց — խրկեց Սուսանանի Հայոց վիճակաց մէջ նշանակեալ տեղերէն աշակերանները ընտրելոյ և յլելոյ համար յատուկ հրահանգներուն համաձայն, որք մինչև ց20 Օգոստոսի այսր պէտք է հասանին և պատրաստ լինին:

Տաճկաստանի և Պարսկաստանի վիճակներէն ևս յատուկ Անդակօք աշակերտներ պահանջուեցան:

Յաջորդ թերթի մէջ պիտի հրատարակուի կոնդակաց, հրահանգի, ճեմարանի հիմնական ծրագրի պատճէնքը և աշակերտաց թուոյն վերայ համառօտ տեղեկութիւններ:

ԼՈՅՍ ՀԱՆԳԻՒՍ.

Ս. Պօլոսոյ մէջ Արժ. Հմայեակ վարդապետ Գիմաքսեանի խմբագրութեամբ Լոյս անուամբ կիսամսեայ հանդէս սկսաւ հրատարակուիլ ներկայ ամսոյս 1 էն: Պարունակութիւնքն են Արօնական, Ազգային, Բարոյական և Բնտանեկան:

Յաջողութիւն և կարողութիւն կը բարեմտագրեմք՝ զի յիշեալ Արժ. Հայր իւր աշխատութիւնը արդիւնաւոր յառաջ վարէ:

ՀԱՅՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀ.

Շուշուայ Հայոց Հողեր դպրանոցի տպարանէն Արժ. Խորէն վարդապետ Ստեփանէի խմբագրութեամբ հրատարակեալ Հայկական Աշխարհ Մանկավարժական և Արօնական ամսագրի Ա և Բ թիւերը ի մի տետրակ լոյս տեսաւ:

Յաջողութիւն և կարողութիւն բարեմտութիւնով՝ կյուսամբ որ յիշեալ Արժ. Հայր Չանք չպիտի խնայէ ամազրոյն օգտուէա պարունակութեանց հետ՝ նա և Հայկական լեզուին հարադատութեան և ոճոյն բարւորման հետեւելոյ համար:

Հ Ա Շ Ի Ի

Գ.Ս.ՊԱՐԵԱՆ ԱՂ.ՔԱՍԱՆՈՅԻՆ

ՀԱՅՈՅ ՄՈՍԿՎԱՅ.

Յանցելումս՝ Մոսկվայու Հայոց Գասպարեան Աղքատանոցի Խորհրդարան՝ իւր վարչութեան 1873 անցեալ թուականի ելեմտից հաշիւը Ա.Ե.Հ. Հայրապետին մատուցած լինելով՝ նորա յայտարարութենէն կարևոր պարբերութեանց հետ աստ արժան կհամարիմք համառօտ հաշիւը ապել:

« Խորհրդարան Աղքատանոցին ընդ այսմ պատիւ ունի մատուցանել Վեհափառութեան Ձերում զհաշիւ Աղքատանոցին վասն 1873 ամի և ամենայարդար բար զեկուցանել թէ՛

Նախ՝ ներկայ հաշիւ ի վերայ հիման 10 յոդ. կանոնաց խորհրդարանին հանդերձ մնացելովքն առ մին Յունվարի այս տարուոյ զբանադիտք և պարտեւ պատշաճ վկայաթղթովք առաջարկեցաւ ի քննութիւն Մոսկուացարնակ Հայ հասարակութեան ընդհանուր Ժողովոյն ի 17 Մարտի անցելոյ ամի, որ քննեալ զայն ընդ ձեռն ընտրելոցն ի միջոյ խրեանց երից անդամոց, եղիտ զայն ուղիղ և զղրամատուցա Աղքատանոցին առ ձեռն պատրաստ, զորմէ կայացաւ եզրակացութիւն ժողովոյ և ստորագրեցաւ յամենից անդամոց ներկայ եղելոց:

Երկրորդ՝ քննութիւն առաջարկեալ հաշուոյն ցուցանէ թէ՛

Առ մին Յունվարի 1875 ամի մնացեալ էր յարկեղ Խորհրդարանի պէսպէս տոկոսաբեր թղթովք ըստ մատենին ելից և մտից, թղթադրամովք և մանրամասնիք ըստ առանձին հաշուոյ . . . 36464 60

Առ այս յընթաց տարուոյն միաւորեցաւ հանդերձ տոկոսեօք ընդունելովք յանընդհատ արդիւնարեր տոմսակաց ընդ համարաւ 109,420 . . . 2554 64

39019 21

Ծ-Ի-Ե-Գ-

Ի ջեռուցումն, յուսաւորութիւն, նորողութիւն շինուածոյ խորհրդարանին, ի անունդ տնանկաց, վասն յուացից հանդերձից, վասն ջրոյ և լցուցանելոյ զգինետունն սառամբք և այլոց ևս . . . 1490 97

Ռոճիկ զրազրի, զրեան ի պէտս խորհրդարանի, զրաւոր պարագայք, հրաւիրական հրատարակութիւնք ի լրագիրս, նորողութիւն անցաթղթոց տնանկաց, ընդօրինակութիւն նոցին և ծախք սուրհանդակատան 142 62

1654 59

Ի տուչութիւն միանուագ եւ ամսական օժանդակութեանց ըստ եզրակացութեան խորհրդարանին և ի կրթութիւն Խօճայեւ օրիորդին . . . 960

2594 59

Յետ այնորիկ առ մին Յունվարի 1874 ամի մնաց յարկեղ խորհրդարանի պէսպէս տոկոսաբեր թղթովք և առձեռն պատրաստի զրամք ըստ մատենին ելից և մտից 53732 58

Թղթադրամք և մանրամասն ըստ առանձին հաշուոյ . . . 672 24

56424 62

Պակաս բան զոր մնացեալն էր առ մին Յունվարի 1875 ամի . . . 59 98

Երրորդ՝ գտանելին ընդ պահպանութեամբ խորհրդարանին յընթաց 1875 ամի անձինք ինն, որք ըստ առաջնոյն վայելելին զքնակութիւն, զջեռուցումն, զլուսաւորութիւն և զանունցն:

Զամօտան Յունվարի անցելոյ ամի մին ի տնանկայ կանցելեարիստ (ղլխանական պաշտօնավար անուանց ատիճան) ազնուական Ա.Ետ Յովհաննիսեան ֆիրատով 84 ամաց փոխեցաւ յատուեսաց և ի տեղի նո-